Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թ.
հոկտեմբերի 27-ի նիստի N 42
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագիրը /այսուհետ՝ Ծրագիր/ բխում է ՀՀ Կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 111-Ն որոշման N1 հավելվածի 92-րդ կետից և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> N 27 արձանագրային որոշման 3-րդ կետից:

2. Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրին:

3. Ծրագրի նպատակն է՝ իրականացվող միջոցառումների շնորհիվ ժողովրդագրական բացասական միտումների կանխումն ու իրավիճակի կայունացումը:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

4. Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության ցուցանիշը 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է շուրջ 3262.6 հազար մարդ, որից շուրջ 2088.5 հազարը՝ քաղաքային և 1174.1 հազարը՝ գյուղական: 2010թ. հունվար-դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության ցուցանիշը 2010թ. տարեսկզբի նկատմամբ աճել է 13.1 հազ. մարդով, ինչը պայմանավորված է բնական հավելաճի ավելացմամբ և միգրացիայի բացասական մնացորդի որոշակի նվազմամբ: 2011 թ. հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության ցուցանիշը կազմել է 3266.4 հազար մարդ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 3.8 հազար մարդով:

5. Հանրապետությունում 2010 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին գրանցվել է 44.825 կենդանի ծնված, 412-ով ավելի, քան 2009 թվականին: 2011 թ. հունվար-հունիսին ծնվածների թվաքանակը կազմել է

20102 մարդ, ինչը 2010թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 927 ծնունդով կամ 4.4 տոկոսով (տես՝ գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Ծնունդների բաշխումն ըստ տարիների, 1990-2011 հունվար-հունիս, (մարդ)



6. Բնական հավելաճի գործակիցը 2010 թվականին կազմել է 5.2 պրոմիլ (1000 բնակչի հաշվով), ինչը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ: Սակայն 2011թ. հունվար- հունիս ամիսներին բնական հավելաճի ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, նվազել է՝ 4.1-ից իջնելով 3.3 պրոմիլի՝ 1000 բնակչի հաշվով: 2010թ. գրանցված ծնունդների շարունակական աճը՝ շուրջ 0.9 %-ով 2009թ. համեմատ, արդյունք է նաև ծնելիության սոցիալական խրախուսման նպատակով իրականացվող միջոցառումների, մասնավորապես <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 3.2 կետով սահմանված երեխայի ծննդյան միանվագ նպաստի բարձր չափի: Ծնունդների խրախուսման տեսանկյունից զգալի ազդեցություն կունենա երկարաժամկետ այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնք, ի լրումն վերոնշյալի, լրացուցիչ աջակցություն կապահովեն երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին՝ գոնե մասնակիորեն լուծելով նրանց բնակարանային, ինչպես նաև երեխաների՝ կրթական վճարովի ծառայությունների մատչելիության հիմնախնդիրները: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի <<Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2011 թվականի պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին>> N 6 արձանագրային որոշման N 2 հավելվածի 6-րդ կետով նախատեսված է 2011 թվականի վերջին ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել <<Երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին պետական լրացուցիչ աջակցության տրամադրման մասին>> հայեցակարգի նախագիծը, որը կսահմանի երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին որոշակի ժամկետներում որոշակի խնդիրների լուծման՝ բնակարանի ձեռքբերման և բնակարանային պայմանների

բարելավման, ինչպես նաև երեխաների շարունակական կրթության հնարավորությունների ընձեռնման հայեցակարգային մոտեցումները:

7. Ծնունդների թվաքանակի բարձրացումը մեծապես կախված է ծննդօգնության ծառայությունների բարելավումից: 2008-2009թթ. հաջողությամբ իրականացվեց <<Ծննդօգնության պետական հավաստագրի>> ներդրման ծրագիրը, որի շրջանակներում լրացուցիչ ֆինանսական ներդրումները հնարավորություն տվեցին շուրջ 2 անգամ բարձրացնել ծննդաբերությունների հետ կապված գները, պետության կողմից այդ ծառայությունների դիմաց բուժհաստատություններին փոխհատուցվող գումարները մոտեցնելով իրական ծախսերին և բարձրացնել բուժաշխատողների աշխատավարձերը, ինչը զգալի նպաստեց ծրագրի շրջանակներում դրված նպատակների իրագործմանը՝ ծննդատներում ստվերի զգալի կրճատմանը, բնակչության համար ծննդօգնության իրապես անվճար ու մատչելի ծառայությունների մատուցմանը: Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման շնորհիվ զգալի բարելավվել են այդ ծառայության հիմնական ցուցանիշները՝ ծրագրի ներդրմանը նախորդող տարվա համեմատ 2010 թ. շուրջ 20%-ով բարձրացավ հղիների նախածննդյան հսկողության վաղ հաշվառման ցուցանիշը (կանանց կոնսուլտացիաների կողմից հաշվառված հղիների ընդհանուր թիվը ավելացել է շուրջ 3000-ով), ինչը խոսում է ծրագրի արդյունավետության մասին:

8. Բնական հավելաճի վրա ուղղակի ներգործություն ունեն մահացության ցուցանիշի միտումները: 2010թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է մահացության 27921 դեպք: Մահացության պատճառական կառուցվածքում մահացության գրեթե բոլոր հիմնական պատճառներից աճ է արձանագրվել, մասնավորապես՝ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (1%), դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից (2.2%), նորագոյացություններից (1.9%), մարսողական օրգանների հիվանդություններից (0.1%), վարակիչ ու մակաբուծային հիվանդություններից (9.4%) և այլ հիվանդություններից (5.5%): Ընդ որում, 2011թ. հունվար-հունիս ամիսներին, 2010թ. նույն ժամանակահատվածի համեմատ, մահացության դեպքերն աճել են 453-ով կամ 3.2 տոկոսով՝ կազմելով 14743 դեպք:

9. Ծնելիության՝ դեռևս ցածր ցուցանիշը պայմանավորող գործոններից մեկը ամուսնությունների՝ դեռևս ոչ բավարար մակարդակն է: 2010թ. հունվար-դեկտեմբերին գրանցված ամուսնությունները 2009թ. հունվար-դեկտեմբերի համեմատ (18773) նվազել են 4.2%-ով և կազմել 17984 դեպք, իսկ ամուսնալուծությունների դեպքերը աճել են 5.9%-ով և կազմել 2997 դեպք: Սակայն 2011թ. հունվար-հունիս ամիսներին, 2010թ. նույն ժամանակաշրջանի համեմատ, նկատվել է ամուսնությունների թվաքանակի աճ 632-ով, թեև աճ է արձանագրվել նաև ամուսնալուծությունների թվաքանակում (տես՝ գծապատկեր 2): Ամուսնությունների թվաքանակի վրա ուղղակի ազդեցություն ունեն ամուսնունակ կոնտինգենտի

թվաքանակի նվազումը, նյութական, բնակարանային, կենցաղային պայմանների պատճառով ամուսնության ժամկետի հետաձգումը կամ դրանից հրաժարումը: Նշված հանգամանքները հանդիսանում են նաև ամուսնալուծությունների հիմնական պատճառ: Մասնավորապես, երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացներին ներազդելու նպատակով ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշմամբ հաստատվել էր «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը, որի մոնիտորինգի արդյունքներով արված առաջարկությունների հիման վրա ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1470-Ն որոշմամբ ծրագրում կատարվեցին փոփոխություններ՝ որոշակիորեն թեթևացնելով մարզերի երիտասարդ ընտանիքներին ներկայացվող պահանջները: «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում 2010 թվականի 11 ամիսների ընթացքում վերաֆինանսավորվել է 187 վարկ՝ 1 մլրդ 541 մլն դրամ ընդհանուր գումարով, 200 մլն դրամ ընդհանուր գումարով ևս 33 վարկերի վերաֆինանսավորում գտնվում է իրականացման ընթացքում:

2011թ մայիսի 31-ի դրությամբ վերաֆինանսավորվել է 425 վարկ՝ 3,311 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով, որից 255 վարկ 2,351 միլիարդ ՀՀ դրամ պայմանագրային գումարով տրամադրվել է Երևանում, իսկ 170 վարկ 960,1 միլիոն ՀՀ դրամ պայմանագրային գումարով՝ ՀՀ մարզերում: Ծրագրի շարունակական իրականացումն ապագայում կարող է դրական ազդեցություն ունենալ ինչպես երիտասարդ ընտանիքների ձևավորման և ամուսնացողների միջին տարիքային կառուցվածքի աստիճանական բարելավման, այնպես էլ բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության մեղմացման ուղղությամբ՝ հաշվի առնելով, որ մարզերում պետությունը սուբսիդավորում է տրամադրված հիփոթեքային վարկի 4 տոկոսը:

Գծապատկեր 2. Ամուսնությունները և ամուսնալուծությունները, 1990-2011 հունվար-հունիս, թվով



10. Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա նշանակալի ազդեցություն ունի գործազրկության մակարդակը: Դիտարկելով հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակն ու կառուցվածքը, հարկ է փաստել, 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ զբաղվածության գործակալության 10 մարզային և 41 տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրող անձանց թվաքանակը կազմել է 93230 մարդ, իսկ գործազուրկների թիվը՝ 78804 մարդ, հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմել է 6,9%: Գործազուրկներից 55.1 հազարը կամ 69.9 %-ը կանայք են, իսկ 19.1 %-ը երիտասարդներ են: 2011թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ զբաղվածության գործակալության մարզային և տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը կազմել է 88.3 հազար մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 12.8 %-ով (101.2 հազ. մարդ), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 5.7%-ով (93.2 հազ. մարդ): Աշխատանք փնտրողների 84.0%-ը (74.1 հազ. մարդ) ստացել է գործազուրկի կարգավիճակ: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 14.4%-ով (84,8 հազ. մարդ), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 5.9%-ով (78.8 հազ. մարդ):

Գծապատկեր 3. Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում, /հազ. մարդ/



11. Գործազրկության պաշտոնապես գրանցված և տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքներով ստացված տվյալներն էապես տարբերվում են միմյանցից: Այսպես, Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված 2010 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալներով 15-75 տարեկան բնակչության գործազրկության մակարդակը կազմել է՝ 19 %, իսկ <<Զբաղվածության պետական

ծառայություն>> գործակալության կողմից պաշտոնապես գրանցված աշխատունակ տարիքի բնակչության գործազրկության մակարդակը նույն ժամանակահատվածում կազմել է 7 %:

12. Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական լրջագույն մարտահրավերներից մեկը մնում է միջպետական միգրացիան: Տարբեր տարիներին անցկացված ընտրանքային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ միգրացիայի դրդապատճառներ են շարունակում հանդիսանալ աշխատատեղերի բացակայությունը և գոյատևման համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը: Ճիշտ է, վերջին մի քանի տարիներին միգրացիոն բացասական մնացորդը դրսևորել է նվազման միտում /տես գծապատկեր 4/, այնուհանդերձ վիճակը հեռու է բավարար լինելուց, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից բնակչության հաշվառման և դուրսգրման տվյալները, ամբողջապես չեն արտացոլում միգրացիայի իրական ծավալները (2011թ. հունվար-հունիս ամիսների տվյալները ներառում են նաև ներքին տեղաշարժերը և չեն արտահայտում միջպետական միգրացիայի իրական պատկերը):

Գծապատկեր 4. Միջպետական միգրացիայի մնացորդը 2002-2011 հունվար-հունիս, /հազ. մարդ/



13. Միգրացիոն գործընթացների վերաբերյալ որոշակի պատկեր է ստեղծում նաև ուղևորափոխադրումների ծավալների ուսումնասիրությունը: Սկսած 1990 թվականից՝ ավելի քան մեկ տասնամյակ արձանագրված ուղևորափոխադրումների բացասական մնացորդը 2004-2006 թվականներին կայունացավ և վերածվեց դրականի: Սակայն, 2007 թվականից կրկին նկատվում է բացասական մնացորդ: 2009թ. համեմատ 2010թ. ուղևորափոխադրումների բացասական մնացորդը աճել է շուրջ 4.9 հազարով:

2011 թ. հունվար-հունիս ամիսներին ուղևորափոխադրումների բացասական մնացորդը աճել է և կազմել 67273, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի -43,9-ի համեմատ (տես՝ գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Ուղևորափոխադրումների հաշվեկշիռն ըստ տարիների, 2000- 2011 թ. հունվար-հունիս, (հազ. մարդ)



14. Արտաքին միգրացիոն հոսքերում ընդգրկված անձանց մեջ գերակշռում են աշխատանքային միգրանտները: Ինչպես վերջին երկու տասնամյակում, այնպես էլ ներկայումս, միգրացիոն հիմնական ուղղությունը Հայաստանի Հանրապետությունից ուղղված է դեպի Ռուսաստանի Դաշնություն, ԱՊՀ այլ երկրներ և ԱՄՆ: Արտաքին միգրացիայի բացասական ազդեցությունը վերարտադրողական տարիքի անձանց, մասնավորաբար տղամարդկանց, տևական բացակայությունն է ընտանիքներից, որն ուղղակիորեն ազդում է հատկապես բնակչության վերարտադրողական վարքագծի վրա: Այդ հանգամանքով պայմանավորված, անբարենպաստ փոփոխությունների են ենթարկվում հանրապետության բնակչության սեռատարիքային համամասնությունները: Ընդ որում, բավարար երաշխիքներ չկան, որ արտերկրում կուտակվող աշխատանքային միգրանտների որոշակի մասն ի վերջո չի մնա մշտական բնակության և, տանելով ընտանիքը, չի խաթարի արտաքին միգրացիոն գործընթացների հարաբերական կայունությունը:

15. Այսպիսով, հանրապետությունում 2010թ. տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել ծնունդների և բնակչության բնական հավելաճի ցուցանիշների որոշակի բարելավում, որն արդյունք է նաև սոցիալական նպատակաուղղված քաղաքականության: Սակայն, դրա հետ մեկտեղ հարկավոր է փաստել, որ առկա ցուցանիշները չեն կարող համարվել բավարար: Ծնունդների թվաքանակի որոշակի աճը, ծնելիության սոցիալական խրախուսման նպատակով իրականացվող միջոցառումների հետ միասին, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ներկայումս ամուսնական տարիք է մտել 1980-ական թթ. ծնված մեծաթիվ սերունդը, և տարեկան կտրվածքով

գրանցված ծնունդների ավելի քան կեսը ընտանիքների առաջնեկ զավակներն են, իսկ երրորդ և հաջորդ երեխաները՝ ընդամենը 15.6 %-ը (2010թ.): Փաստորեն, հայաստանյան ընտանիքներում երեխաների իրական թիվը, որ գոյություն ունի ներկայումս, դեռևս չի ապահովում անգամ պարզ վերարտադրությունը:

16. Տարբեր տարիներին բնակչության շրջանում իրականացված բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ ստեղծված ժողովրդագրական իրավիճակի պատճառների ճնշող մեծամասնությունն ուղղակիորեն կապված է ընտանիքներում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ինքնուրույն լուծումների անկարողության հետ: Իհարկե, դժվար է պնդել, որ սոցիալական հիմնախնդիրների լուծմանը զուգընթաց ընտանիքներում մեխանիկորեն կավելանա երեխաների թիվը: Սակայն այն, որ սոցիալական հիմնախնդիրների լուծումը ժողովրդագրական իրավիճակի շտկման կարևորագույն նախապայման է, միանշանակ է և հիմնավորվում է բազմաթիվ երկրների օրինակով:

III. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

17. Հաշվի առնելով հանրապետությունում ժողովրդագրական զարգացումների միտումները, ինչպես նաև ժողովրդագրական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունները, դրանց իրականացման կոնկրետ առաջադրանքներն ու միջոցները, սահմանվել են Ծրագրի հիմնական խնդիրները: Դրանք են՝

1) ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործումը,

2) ծնունդների սոցիալական խթանումը՝ երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով,

3) երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի աստիճանական բարելավումը,

4) վաղաժամ մահացությունների թվաքանակի նվազեցումը,

5) բնակչության առողջության և հատկապես վերարտադրողական առողջության վիճակի բարելավումը,

6) բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության մեղմումը:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

18. Ծրագրով նախատեսված միջոցառումները և ակնկալվող արդյունքները ներկայացված են N 2 հավելվածում:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թ.
հոկտեմբերի 27-ի նիստի N 42
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2012 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Պատասխանատու կատարողը
1	Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2011թ. պետական ծրագրով նախատեսված միջոցառումների մոնիթորինգ	Պետական ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքների ամփոփում, գնահատում, վերլուծությունների իրականացում և համապատասխան մարմիններ առաջարկությունների ներկայացում /ըստ անհրաժեշտության/	2012թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
2	Ժողովրդագրական խնդիրների վերաբերյալ հետազոտությունների կազմակերպում և իրականացում	Ժողովրդագրական գործընթացների վրա գործոնային ազդեցությունների բացահայտում, ժողովրդագրական իրավիճակի ժամանակագրական զարգացումների գնահատում, և համապատասխան առաջարկությունների ներկայացում	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

3	Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի և ժողովրդագրության ոլորտում տարվող պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և ծրագրվող միջոցառումների վերաբերյալ հանրային իրազեկում	ՀՀ-ում ժողովրդագրական իրավիճակի և ժողովրդագրության ոլորտում տարվող պետական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվավերլուծական նյութերի տպագրում, հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստում	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
4	Ժողովրդագրական զարգացման հիմնահարցերով զբաղվող պետական ծառայողների որակավորման բարձրացում	Շուրջ 15 պետական ծառայողի վերապատրաստում.	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
5	Ընդլայնված վերարտադրության խրախուսում	Ընտանիքում երեխաների ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված երրորդ և հաջորդ շուրջ 6231 երեխաների միանվագ նպաստի տրամադրում	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
6	<<Երիտասարդներին՝ մատչելի բնակարան>> պետական նպատակային ծրագրի իրականացում	ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրի մոնիթորինգ	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
7	Նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնում	Նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային և ծախսարդյունավետ մոդելների ներդրման միջոցով հանրապետության 8 մարզերում նախադպրոցական կրթության մեջ լրացուցիչ ընդգրկել շուրջ 2334 երեխա	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ մարզպետարաններ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն

8	Վաղաժամ մահվան առավել տարածված պատճառ հանդիսացող շաքարային դիաբետի, սիրտ-անոթային, չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման ծրագրերի իրականացում	Նշված հիվանդությունների պատճառով մահացության ցուցանիշի նվազեցում 3%-ով	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն
9	Մայրական առողջության բարելավում	Մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշի կրճատում 10%-ով (100.000 կենդանածնի հաշվով), նախածննդյան գոնե մեկ այց կատարած հղիների թիվը հասցնել 95% ևավելի	2012թ.ընթացքում	դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն
10	Մտավոր և ֆիզիկական թերզարգացման և հաշմանդամության կանխարգելման միջոցառումների շրջանակներում նորածնային սկրինինգ ծրագրերի իրականացում ՀՀ ողջ տարածքում, այդ թվում՝ - հիպոթիրեոզի - ֆենիլկետոնուրիայի - լսողության	Ներարգանդային ախտաբանությունների գործընթացի բարելավում, անտենատալ սկրինինգային ծրագրերում հղիների ընդգրկվածության բարձրացում 20%-ով, նշված ախտաբանությունների նորածինների մոտ տարեկան մինչև 20 դեպքերի հայտնաբերում և հետագա բարդությունների կանխարգելում	2012թ.ընթացքում	դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն

11	Սպառողների առողջության համար սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի կատարելագործում, այդ բնագավառում միջազգային լավագույն փորձի տեղայնացում	Սննդամթերքի անվտանգության զարգացման ռազմավարության իրականացումն ապահովող գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում: Սննդամթերքի անվտանգության չափանիշներին չհամապատասխանող սննդամթերքի իրացման և օգտագործման կանխարգելում՝ պետական վերահսկողության շրջանակներում կատարվող նմուշառումների և լաբորատոր փորձաքննությունների միջոցով	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
12	Կանանց և տղամարդկանց անպտղության կանխարգելմանն ու բուժմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	'Անպտղության բուժման արդյունավետության միջին ցուցանիշի աճ մինչև 10 % ով	2012թ.ընթացքում	դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն
13	Հղիների մոտ սեռավարակների թեսթավորում	Հղիների սիֆիլիսի, գոնորեայի, տրիխոմոնիազի հետազոտության ընդգրկվածությունը հասցնել 85% և ավելի	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ առողջապահության նախարարություն
14	Հղիության արհեստական ընդհատման անվտանգության մակարդակի բարձրացում	Մայրական մահացության կառուցվածքում հղիության արհեստական ընդհատմանը վերագրվող մասնաբաժնի նվազեցում մինչև 5%	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ առողջապահության նախարարություն

15	Ընտանիքի պլանավորման ծառայությունների ցանցի հզորացում, մատչելիության բարձրացում, ծառայություն մատուցող մասնագետների գիտելիքների բարձրացում	Ընտանիքի պլանավորման խորհրդատվություն և հակաբեղմնավորիչներ տրամադրող առողջության առաջնային պահպանման մակարդակում գործող ամբուլատորիաների, կանանց կոնսուլտացիաների և շտապ հակաբեղմնավորման միջոցներ տրամադրող ամբուլատոր գինեկոլոգիական ծառայության բարելավում, միջազգային համագործակցության շրջանակներում ծառայություն տրամադրող 30 բժշկական հաստատությունում ծառայություն մատուցող բուժանձնակազմի գործելակերպի և գիտելիքների գնահատում	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն
16	Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող ինֆեկցիոն հիվանդությունների՝ տուբերկուլյոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների, կառավարելի վարակիչ հիվանդությունների կանխարգելում, անհրաժեշտ պատվաստումների և սկրինինգային հետազոտությունների իրականացում	Տուբերկուլյոզով հիվանդների հայտնաբերման աճ մինչև 10%-ով, սեռավարակների տարածման նվազեցում 10 %-ով, սիֆիլիսի տարածման նվազեցում 15 %-ով, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման դեպքերի ցուցանիշի իջեցում մինչև 5 %: Պատվաստումներում մինչև 1, 2 և 7 տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության մակարդակի բարձրացում առնվազն 1%-ով, կարմրախտի դեմ 1 և 6 տարեկան երեխաների պատվաստումներում առնվազն 95% ընդգրկվածության ապահովում	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն

17	Նորածնային ախտաբանությունների ներարգանդային ախտորոշման գործընթացի բարելավում, վաղ ախտորոշում և անհրաժեշտ բժշկական գործընթացի ապահովում	Ցածր քաշով նորածինների ցուցանիշի նվազեցում մինչև 7,5%, (ելակետը 8,5%)	2012թ.ընթացքում	դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն
18	Երեխաների և դեռահասների առողջության պահպանում և զարգացում	Մանկական (0-1) և մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշի նվազեցում տարեկան մինչև 5%-ով: Բացառապես կրծքով սնուցման ցուցանիշի բարձրացում՝ տարեկան մինչև 5%-ով	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն
19	Վերարտադրողական օրգանների չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերում և կանխարգելում՝ սպասարկման տարածքում բնակվող 30-60 տարեկան կանանց օնկոցիտոլոգիական հետազոտության իրականացում	Սեռական օրգանների չարորակ նորագոյացությունների կանխարգելման սկրինինգում կանանց ընդգրկվածությունը հասցնել 25% և ավելի	2012թ.ընթացքում	դոնոր կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն
20	Ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդմանը, անհատի ներդաշնակ զարգացմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը նպատակաուղղված զանգվածային միջոցառումների, մրցույթների կազմակերպում և իրականացում	ՀՀ պետական բյուջեով նախատեսված՝ համապատասխան միջոցառումների պատշաճ կազմակերպում	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,

21	Տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովում	Տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության մեծացում. 3 մարզակառույցների վերանորոգում	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
22	Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգա-վորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների մոնիթորինգ	Գործողությունների ծրագրով նախատեսված 2012թ. իրակա-նացվելիք միջոցառումների ար-դյունքների ամփոփում, բացերի վերհանում և համապատասխան առաջարկությունների ներկայացում	2012թ.ընթացքում	ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն
23	<<Թանգարան անիվների վրա>> և <<Շարժական գրադարան>> ծրագրերի իրականացում	Սահմանամերձ և հեռավոր շրջանների բնակավայրերի մշակութային սպասարկում՝ իրականացված ծրագրերի միջոցով:	2012թ.ընթացքում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ մշակույթի նախարարություն